

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ**

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
խմբագրական խորհուրդ՝

Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Զուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:

Арман Егиазарян (редактор, д.и.н., проф.), **Арам Симонян** (директор Института Арменологических исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсисян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Напетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:

Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, associate prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, associate prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Սեյրան Չաքարյան - ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ, ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԵՎ ԻՄԱՍՏԱՍԻՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՅՈՒՐԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	8
Сейран Закарян - ИСТОЧНИКИ ФИЛОСОФИИ ГРИГОРА ТАТЕВАЦИ, ЕГО ИДЕИ И СПЕЦИФИКА ЕГО СПОСОБА ФИЛОСОФСТВОВАНИЯ.....	16
Seyran Zakaryan - GRIGOR TATEVATSI'S PHILOSOPHICAL SOURCES, IDEAS AND PECULIARITIES OF THE WAY OF PHILOSOPHIZING.....	17
Հասմիկ Ամիրջանյան - ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՅՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԿՈՐ-ՎԱՐՉԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.....	19
Асмик Амирджанян - ДУХОВНО-АДМИНИСТРАТИВНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ГУКАСА КАРНЕЦИ.....	27
Hasmik Amirjanyan - ADMINISTRATIVE-SPIRITUAL ACTIVITIES OF GHUKAS KARNETSI.....	28
Վարդան Միսիրջանյան, Գոհար Ղամբարյան - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. ՍԵՎԱՆԼԱ ԼՅԻ ԱՎԱԶԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ XIX ԴԱՐԻ 30-ԱՎԱՆՆԵՐԻՆ.....	29
Вардан Мхитарян, Гоар Гамбарян - ИНФОРМАЦИОННАЯ ВОЙНА: НАСЕЛЕННЫЕ ПУНКТЫ БАСЕЙНА ОЗЕРА СЕВАН В 30-Х ГОДАХ XIX ВЕКА.....	39
Vardan Mkhitaryan, Gohar Ghambaryan - INFORMATION WAR: SETTLEMENTS OF THE LAKE SEVAN BASIN IN THE 30s of XIX.....	39
Լիլիթ Մակարյան - ԱՊԱՐԱՆԻ ՎԱՐԴԵՆԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԻ ԵՎԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԵՃՉԳՐՏՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐԶ.....	45
Лилит Макарян - К ВОПРОСУ О ПЕРЕСЕЛЕНИИ СЕЛА ВАРДЕНИС АПАРАНА И УТОЧНЕНИИ НАЗВАНИЙ МЕСТНЫХ ЦЕРКВЕЙ.....	49
Lilit Makaryan - ON RESETTLEMENT ISSUE OF VARDENIS VILLAGE OF APARAN AND NAME CLARIFICATION OF LOCAL CHURCHES.....	49
Ֆելիքս Մովսիսյան - ՌՈՒՄԱՅԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ XIX ԴԱՐԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ.....	50
Феликс Мовсисян - ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ РОССИЙСКИХ АРМЯН ОБ ИТАЛЬЯНСКОЙ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ XIX ВЕКА.....	66
Felix Movsisyan - ARMENIAN PERIODICALS OF RUSSIA ON THE 19TH CENTURY NATIONAL STRUGGLE OF ITALY.....	67
Սուսաննա Առաքելյան - ԲԱՔԿԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ-ԼՈՒՄԱՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԴՊՐՈՑԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1864-1896 ԹԹ.....	69

Сусанна Аракелян – ОБРАЗОВАТЕЛЬНО-ПРОСВЕТИТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОГО ГУМАНИТАРНОГО ОБЩЕСТВА БАКУ И СТРОИТЕЛЬСТВО ШКОЛ В 1864-1896.	87
Susanna Arakelyan – EDUCATIONAL AND SCHOOL-BUILDING ACTIVITIES OF ARMENIAN HUMANITARIAN SOCIETY OF BAKU IN 1864-1896.	87
Գեղամ Բաղայան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ [Սևերակի, Ջերմուկի, Միդիատի, Մծբինի (Նիսիբին) և Վերանշեհիրի գավառները].....	88
Гегам Бадалян – ИСТОРИКО-НАРОДНОЕ ОПИСАНИЕ ЗАПАДНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН (Северакский, Джермукский, Мидиатский, Мцбинский (Нисибинский) и Вераншехирский уезды).	115
Gegham Badalyan – HISTORICAL-NATIONAL DESCRIPTION OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE (provinces Severak, Jermuk, Midiat, Mtsbin (Nisibin) and Veranshehir).	115
Աննա Վարդանյան – ԴԻԱՆԱ ԱԲԳԱՐ. ՀԱՅ-ԵԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ	117
Анна Варданян – ДИАНА АБГАР - «МАТЬ АРМЕНИИ НА ДАЛЬНЕМ ВОСТОКЕ»: ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ. ПО СЛЕДАМ ИСТОКОВ АРМЯНО-ЯПОНСКИХ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ОТНОШЕНИЙ.	123
Anna Vardanyan – DIANA ABGAR -“MOTHER OF ARMENIA IN THE FAR EAST”: LIFE AND ACTIVITIES. TRACING BACK TO ARMENIAN-JAPANESE HISTORICAL AND CULTURAL RELATIONS.	124
Գայանե Հովհաննիսյան – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ 1926 Թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ	125
Гаяне Оганнисян – НАСЕЛЕНИЕ НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ПО ВСЕСОЮЗНОЙ ПЕРЕПИСИ 1926 г.	132
Gayane Hovhannisyan – POPULATION OF THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION ACCORDING TO THE ALL-UNION CENSUS (1926).	133
Արտակ Խաչատրյան – ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻՆ ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....	134
Артак Хачатрян – НАЦИОНАЛЬНЫЙ ВОПРОС В ВОСПРИЯТИИ БОЛЬШЕВИСТСКОЙ ПАРТИИ В ДОСОВЕТСКИЙ ПЕРИОД (1903-1917 гг.).....	141
Artak Khachatryan – NATIONAL ISSUE IN THE PERCEPTIONS OF THE BOLSHEVIK PARTY IN THE PRE-SOVIET PERIOD (1903-1917).	141
Մանյակ Երանոսյան – ՀԱԿՈԲ ԶԱՎՐԻՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԶՐՈՒՄՈՒՄ (1916 Թ. ՀՈՒԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ)	142
Маняк Ераносян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ЯКОВА ЗАВРИЯНА В ЭРЗРУМЕ (ИЮЛЬ-СЕНТЯБРЬ 1916 Г.).....	149
Manyak Yeranosyan – НАКОВ ZAVRIYAN'S ACTIVITIES IN ERZRUM (1916 JULY-SEPTEMBER).	150

Գևորգ Կեսոյան – ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԹԻՎ – ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....	151
Геворг Кесоян – СИТУАЦИЯ НА ГРАНИЦЕ ТУРЦИЯ-СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.....	159
Gevorg Kesoyan – THE SITUATION ON THE TURKISH-SOVIET ARMENIAN BORDER DURING THE GREAT PATRIOTIC WAR.....	160
Արման Սաֆարյան – ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՎԱՆ-ԴՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՐԸ՝ ՄՈՒՆԻՏԻՄԵՆՏԻՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԲԱՎ-ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....	161
Арман Сафарян – РОЛЬ ТРАДИЦИЙ АРМЯНСКОЙ ПУБЛИЦИСТИКИ В ПРОЦЕССЕ ОСВЕЩЕНИЯ ЭКОЛОГИЧЕСКОЙ ПРОБЛЕМАТИКИ В МУЛЬТИМЕДИЙНОМ ПРОСТРАНСТВЕ.....	164
Arman Safaryan – THE ROLE OF ARMENIAN OPINION JOURNALISM IN THE COVERAGE OF ECOLOGICAL ISSUES IN MULTIMEDIA.....	165
Սարգիս Սկրտչեան – ՊԱՆԹԻՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՐՉԵՐԻՆ - 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԵՐԻՆ.....	166
Саргис Мкртчян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ПАНТЮРКИСТСКИХ ОРГАНИЗАЦИЙ В ИРАНЕ В КОНЦЕ XX – НАЧАЛЕ XXI ВЕКОВ.....	174
Sargis Mkrtchian – ACTIVITIES OF PAN-TURKISH ORGANIZATIONS IN IRAN AT THE END OF THE 20TH CENTURY - AT THE BEGINNING OF THE 21ST CENTURY.....	174
Սերի Նաջարյան, Հռիփսիմե Մուրադյան – ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱՆՈՐՏԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (2001-2016թթ.).....	176
Мери Наджарян, Рипсима Мурадян – ПОЗИЦИЯ ГЕРМАНИИ В ВОПРОСЕ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН (2001-2016 ГГ.).....	183
Meri Najaryan, Hripsime Muradyan – GERMANY’S STAND ON THE ISSUE OF INTERNATIONAL RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE (2001-2016).....	184
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ / ТЕОРИЯ ИСТОРИИ / THEORY OF HISTORY	
Գևորգ Եաղարյան – ԱՆՑՅԱԼԻ ՊԱՏՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՊԱՐ-ՀԻՆ (ԹՈՄԱՍ ԶԱՐԼԱՅԼԸ ԵՎ ՆՐԱ «ԴԱՐՁԵԱԼ Ի ԿԵՐԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՀՈՂԿԱԾԸ).....	185
Геворг Тшагарян – НА ПУТИ ИСТОРИЗАЦИИ ПРОШЛОГО (ТОМАС КАРЛЕЙЛЬ И ЕГО СТАТЬЯ «СНОВА ОБ ИСТОРИИ»).....	205
Gevorg Tshagharian – ON THE PATHWAY OF HISTORICIZATION OF THE PAST (THOMAS CARLYLE AND HIS ESSAY «ON HISTORY AGAIN»).....	206
Լիզա Քարիմյան – ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ «ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ» ԳՈՏՈՒ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱ-ՖԻԴԱՆՅԱՆԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ.....	207
Лица Каримян – КОНЦЕПЦИЯ АРМЯНО-ВИЗАНТИЙСКОЙ “КОНТАКТНОЙ” ЗОНЫ В. АРУТЮНОВОЙ-ФИДАНЯН.....	216

Liza Karimyan - V. ARUTYUNOVA-FIDANYAN'S CONCEPT OF ARMENIAN-BYZANTINE "CONTACT" ZONE. 217

ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ֆրինա Բաբայան - ՀՈՍՏՈՒՆ (ՈՍՏԱՆ) ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (2005-2006 ԹԹ.) 218

Фрина Бабаян - РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК СРЕДНЕВЕКОВОГО ПОСЕЛЕНИЯ ХОСТУН (2005-2006 ГГ.) 222

Frina Babayan - RESULTS OF EXCAVATIONS AT THE MEDIEVAL SETTLEMENT OF HOSTUN (2005-2006 SEASONS) 223

Ռաֆիկ Նահապետյան - ԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵՉ (XIX դ. - XX դ. սկիզբ) 228

Рафик Наапетян - ТРАДИЦИОННАЯ СИСТЕМА РАССЕЛЕНИЯ АРМЯН (XIX В. - НАЧАЛО XX В.) 235

Rafik Nahapetyan - THE TRADITIONAL SYSTEM OF SETTLEMENT OF ARMENIANS (XIX CENTURY - BEGINNING OF XX CENTURY) 235

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Արման Եղիազարյան - ՀՅՂ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂԹԱԿԱՅՐԵՐՈՒՄ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՎ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ 237

Арман Егиазарян - ДЕЯТЕЛЬНОСТЬ АРФ ДАШНАКЦУТЮН В ДИАСПОРЕ В 1920-Е ГОДЫ И ПРОБЛЕМА СОЗЫВА ОБЩЕДИАСПОРНОГО КОНГРЕССА 247

Arman Yeghiazaryan - ACTIVITIES OF ARF DASHNAKTSUTYUN IN DIASPORA IN THE 1920S AND THE PROBLEM OF CONVENING A DIASPORA CONGRESS 248

Հայկ Մարտիրոսյան - ՍՓՅՈՒՌՔԱԳՅԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ 249

Айк Мартиросян - СОТРУДНИЧЕСТВО КОМИТЕТА ПО КУЛЬТУРНЫМ СВЯЗЯМ С АРМЯНАМИ ДИАСПОРЫ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ США 257

Hayk Martirosyan - COOPERATION OF THE COMMITTEE OF THE CULTURAL RELATIONS WITH ARMENIANS OF DIASPORA WITH THE ARMENIAN COMMUNITY OF THE USA 257

Էդիկ Մինասյան - ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱԴՆԵՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 21-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՍՅԱԿՆԵՐՈՒՄ 259

Эдик Минасян - ДЕЯТЕЛЬНОСТЬ ВСЕАРМЯНСКИХ ФОНДОВ, ОБЩЕСТВЕННЫХ И БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ ПО УКРЕПЛЕНИЮ ОТНОШЕНИЙ АРЦАХ-ДИАСПОРА В ПЕРВЫЕ ДЕСЯТИЛЕТИЯ XXI ВЕКА 272

Edik Minasyan – ACTIVITIES OF THE ALL-ARMENIAN FUNDS, NGOS AND CHARITABLE ORGANIZATIONS TO STRENGTHEN ARTSAKH-DIASPORA RELATIONS IN THE FIRST DECADES OF THE 21ST CENTURY. 273

Կարեն Մկրտչյան – ԱՐՏԱԳԱՂԹԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 274

Карен Мкртчян – МИГРАЦИЯ И ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ В АРМЯНСКОЙ ОБЩИНЕ ИРАНА. 280

Karen Mkrtchyan – MIGRATION AND EDUCATIONAL PROBLEMS IN THE ARMENIAN COMMUNITY OF IRAN. 281

ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ / ПЕДАГОГИКА / PEDAGOGY

Սերի Հովհաննիսյան – ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ (ծննդյան 180-ամյակի առթիվ)..... 282

Мери Оганнисян – ЦЕННОСТНЫЕ ПОДХОДЫ К ОБРАЗОВАНИЮ ПО ГАЗАРОСУ АГАЯНУ. 289

Meri Hovhannisyan – VALUE-BASED APPROACHES TO EDUCATION BY GHAZAROS AGHAYAN. 289

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Էրիկ Գալեգիսի ՄԻՆԱՍՅԱՆ, ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-2018 թթ.), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 380 էջ + 16 էջ ՆԵՐՂԻՐ:..... 291

ԲԱԶՄԱԿԱՍՏԱԿ ԱԶԳԱԳՐԱԳԵՏԻ ՆՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 293

ՄԻՔԱՅԵԼ ԱՐՄԵՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ-17-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ, ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 300 էջ:..... 295

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՍՓՈՐԴՆԵՐ 298

ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ. 2020 թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԱՆՄԱՀԱՑԱԾ՝ ԵՊՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՍԱՆԵՐԸ 315

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 318

INFORMATION ABOUT THE AUTHORS 320

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 322

NOTICE FOR THE AUTHORS 322

Մերի Նաջարյան, Հռիփսիմե Մուրադյան

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (2001-2016ԹԹ.)

Հիմնաբառեր. Հայոց ցեղասպանություն, ՀՀ, Գերմանիա, Սփյուռք, նոր մոտեցում, բանաձև, Բուկուրեսթագ, ելույթ, ճանաչում, Թուրքիա:

Առաջին հայացքից թվում է, թե ցեղասպանությունը անցյալում տեղի ունեցած երևույթ է, և այն ուսումնասիրող գիտությունները միայն պատմական գիտություններն են: Բայց պետք է փաստել, որ ցեղասպանությունը միայն պատմական երևույթ չէ: Այն մեր առօրյա կյանքի, համաշխարհային քաղաքականության մի մասն է: Այսօր էլ աշխարհի մի շարք երկրներում ընթանում են գործողություններ, որոնք կամ շատ մոտ են ցեղասպանություն կոչվելուն կամ հենց ցեղասպանություն են: Ցեղասպանությունը չարիք է, որի անպատժելիությունը չի բացառում դրա կրկնման հավանականությունը: Ուստի տարբեր պետությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը մեզ համար բոլորովին էլ ինքնանպատակ չէ: Պահանջելով Հայկական հարցի արդարացի լուծում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիա»¹ համաձայնագրի շրջանակներում՝ այսօր փորձ է արվում համամոլորակային մակարդակով կանխել ապագա հանցագործությունները մարդկության դեմ: Այսպիսով, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործընթացը պետք է նպաստի ապագայում նմանատիպ հանցագործությունների կանխարգելմանը:

Միանգամայն տեղին է նկատել ցեղասպանագետ Յարի Աուրոն նշելով, որ «այն պետությունները, որոնք իրենց իսկ սեփական շահերից ելնելով մի կողմ քաշվելով չեն միջամտում նմանօրինակ հանցագործությունները կանխելու գործընթացին, անխուսափելիորեն աջակցում են մարդասպաններին, բայց ոչ զոհերին»²: Այդ կապակցությամբ հարկ ենք համարում անդրադառնալ Առաջին աշխարհամարտի տարիներին Թուրքիայի հզոր դաշնակից Գերմանիային, որը կարող էր ձեռնարկել հաշվեհարդարը դադարեցնելու գործընթաց, սակայն այդպես էլ չմիջամտեց և նույնիսկ ուղղակի և անուղղակի մասնակցություն բերեց հայերի ցեղասպանությանը³: Իսկ արդեն հետագայում Գերմանիայում հիմնահարցի անտեսմամբ պարզապես փորձեր էին արվում «մոռանալ» այն, կամ «փնտրել» և «գտնել» տարբեր մեղմացուցիչ հանգամանքներ, որոնք, վերջին հաշվով, նպատակ ունեին եթե ոչ արդարացնելու ցեղասպան պետության իրականացրած հանցագործ քաղաքականությունը, ապա գոնե առժամանակ թաքցնել Գերմանիայի մեղսակցությունը: Եվ այդ համատեքստում գերմանական կառավարությունը ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի նկատմամբ դրսևորեց գրեթե լիակատար անտարբերության և սեփական շահի հետևում «համամարդկային չարիքը» չտեսնելու դիրքորոշում: Իսկ այդ երկու ծայրահեղությունների միջև՝ «սեփականի» և «համամարդկայինի» լարվածության տարածքում, տատան-

* Հոդվածը ներկայացվել է 28.08.2020 թ., գրախոսվել՝ 24.11.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.12.2020 թ.:

¹ Տե՛ս «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիա», Միավորված ազգերի կազմակերպության Հանրային տեղեկատվության վարչության երևանյան գրասենյակ, http://www.un.am/res/UN%20Treaties/III_1.pdf:

² Աուրոն Յա., Անընդունելի անտարբերություն: Միոնիզմը և Հայոց ցեղասպանությունը, Ե., 2013, էջ 30:

³ Տե՛ս Ղարիբջանյան Գ. Բ., Գերմանիան, Հայկական հարցը և Հայոց ցեղասպանությունը 1878-1918 թթ., Ե., 2001, էջ 136:

վում էր գերմանական հասարակությունը՝ իր ներսում ընթացող բոլոր հրապարակային բանավեճերով: Գերմանիայում Չայոց ցեղասպանության ճանաչման բանաձևի նախաձեռնողներն ու կողմնակիցները, որոնց մեջ էին հասարակական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ, Բուլղետթագում լուսմեր կազմակերպող ազդեցիկ գործիչներ, քաջատեղյակ էին պաշտոնական գրագրություններին, առաջին հերթին արտգործնախարարության բարձրաստիճան այրերի պաշտոնական հրահանգներին¹, որոնք վկայում են Գերմանիայի, «մեղմ ասած», մեղսակցությունը Չայոց ցեղասպանությանը: Հետևաբար այս ամենը ոչ միայն համոզեց բանաձևը ընդունողներին ցեղասպանության եղելության մեջ, այլև փաստեց այդ ոճրագործությունը դատապարտելու անհրաժեշտությունը: Ուստի ամենևին էլ պատահական չէր, որ երկրում հաստատված փոքրաթիվ հայ համայնքի հետ միասին մի շարք կազմակերպություններ հանդես եկան Չայոց ցեղասպանության ճանաչման հիմնահարցը Բուլղետթագում քննարկելու նախաձեռնողների² դերում և 2000 թ. նոյեմբերին համատեղ կազմված հավելված-հայցադիմում ներկայացրին Բուլղետթագ՝ Չայոց ցեղասպանության ճանաչման հարցը օրակարգի մեջ մտցնելու և քննարկելու առնչությամբ³:

Անշուշտ, նման լուրջ և սկզբունքային նշանակություն ունեցող բանաձևի ընդունումը Բուլղետթագում չէր կարող կատարվել միանգամից: Ինչպես իրավաճիորեն նկատել է Գերմանիայում Չայոց ցեղասպանության ճանաչման հանձնախմբի անդամ, Բեռլինի պետական ազատ համալսարանի դոցենտ, հայագետ Ժիրայր Քոչարյանը՝ «Գերմանիան և Թուրքիան քննարկվող ժամանակաշրջանում դաշնակիցներ էին»: Եվ, չնայած այն փաստին, որ «օրինակ 1955 թ. Գերմանիան ընդունեց ՄԱԿ-ի ցեղասպանությունների դատապարտման կոնվենցիան», այնուամենայնիվ, «երկու տարի անց ՆԱՏՕ-ի կազմում հսկայական գումարներ հատկացրեց թուրքական բանակին: Ուստի, գերմանա-թուրքական հարաբերությունները ամուր թելերով կապված էին գրեթե բոլոր ոլորտներում և այդ երկրում ապրող միլիոնավոր թուրքերը լուրջ ազդեցություն էին ունենում երկրի արտաքին քաղաքականության վրա, հատկապես Չայոց ցեղասպանության հարցի առնչությամբ»⁴: Հետևաբար, ինչպես նշում է հայագետը, «Չայաստանն այս ամենում դերակատարություն չունեց, Գերմանիան ավելի սերտ համագործակցություն ուներ ոչ թե Չայաստանի, այլ Թուրքիայի հետ, և անգամ ճանաչման որոշումը հայ-գերմանական հարաբերությունների հետ չի կարելի կապել: ...Ռազմական, տնտեսական, տեխնիկական և մի շարք այլ բնագավառներում Գերմանիան համագործակցում էր Թուրքիայի հետ», ուստի «Գերմանիան սերտ կապեր ունենալով Թուրքիայի հետ ցանկացած որոշում ընդունելիս հաշվի էր առնում այդ կապը»⁵:

Առաջին անգամ ԳԴՀ Բուլղետթագում ներկայացված Չայոց ցեղասպանությունը դատապարտող պաշտոնական փաստաթուղթը քննարկվեց հայցադիմումների հանձնաժողովի

¹ *“Die Armenische Frage und der Genozid an der Armeniern in der Türkei (1913-1919), Dokumente aus dem Politischen Archiv des Deutschen Auswärtigen AMTS”, Zusammengestellt und Eingeleitet von prof.dr. Wardges Mikaelyan, Yerevan, 2004, S. 634.*

² *Ցեղասպանության ճանաչման և դատապարտման հարցը Բուլղետթագում քննարկելու նախաձեռնողներից էին Մյունխենի Չայկական հարցերի հաստատությունը, Բոխումի Ռուր համալսարանին կից Սփյուռքի և ցեղասպանության հարցերի հետապոստության ինստիտուտը, Չայլե-Վիտենբերգի Մարտին Լյութեր համալսարանի Լոյկրեա հիմնադրամին կից, «Մետրոպ» հայագիտական կենտրոնը, Բեռլինում Թեսսա Յոֆմանի գլխավորությամբ գործող «Չայկական փաստագրական կենտրոնը», Գերմանահայոց կենտրոնական խորհուրդը, Վտանգված ազգերի կազմակերպության «Չայաստան» համակարգող խումբը, պետական այրեր, Բուլղետթագի պատգամավորներ, հանրաճանաչ գիտնականներ ու մտավորականներ:*

³ *Տե՛ս Խաչատուրյան Ա. Վ., Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բուլղետթագի՝ Չայոց ցեղասպանության մասին բանաձևի քննախոսություն, «Բանբեր Երևանի համալսարանի», 2006, № 3, էջ 198:*

⁴ *Քոչարյան Ժ., Գերմանիայի պետական քաղաքականությունը Չայոց ցեղասպանության նկատմամբ չի փոխվում, <https://armenpress.am/arm/news/823973> (մուտք՝ 30.10.2015 թ.)*

⁵ *Քոչարյան Ժ., Չգիտեմ՝ ինչ ասել է հայ-գերմանական հարաբերություններ, <https://www.1in.am/1610165.html> (մուտք՝ 30.04.2015 թ.)*

վի 2001 թ. ապրիլի 4-ի նիստում: Նիստում ընդունվում է որոշում հանձնաժողովին ներկայացված հայցադիմումի տեքստը, փաստարկների փաթեթը և Բունդեսթագի կողմից ներկայացված ուղեկցող նամակը հայցադիմումների հանձնաժողովի նախագահ Չայդեմարի Լուբի ստորագրությամբ փոխանցել ԳԴՅ արտգործնախարարություն՝ կառավարության կարծիքը ստանալու նպատակով¹: Ի պատասխան այս որոշման 2001 թ. հուլիսի կեսերին ԳԴՅ-ի արտաքին գործերի նախարարությունը նշում է, որ «ԳԴՅ-ի ԱԳԼ-ն այդ խնդրի վրա է հրավիրել Թուրքիայի ԱԳ նախարարության ուշադրությունը և պաշտոնական պատասխան ստացել այն մասին, որ հարցի ցանկացած քննարկում օտար խորհրդարաններում կարող է խոչընդոտել հայ-թուրքական հարաբերություններին»²: Նման առաջարկը ամենևին էլ նորություն չէր, քանի որ Թուրքիայի յուրաքանչյուր վարչակազմի կողմից նման կոչեր հնչել են նաև նախկինում՝ նպատակ ունենալով հակազդել Չայոց ցեղասպանության ճանաչման գործընթացին: Չայտնի է, թե որքան ցավագին էր ընդունում Թուրքիան ցանկացած երկրի կողմից ցեղասպանությունը ընդունելու փաստը: Ինչպես նախկինում, այնպես էլ քննարկվող ժամանակաշրջանում Թուրքիայի ղեկավարությունը շարունակում էր մեղադրել գերմանական կառավարությանը այն բանի համար, որ վերջիններս, ճանաչելով Չայոց ցեղասպանության փաստը, խոչընդոտում են ոչ միայն Չայաստանի և Թուրքիայի միջև ընթացող մերձեցման գործընթացին, այլ նաև բարդացնում թուրք-գերմանական միջպետական առնչությունները: Թուրքական կողմը շարունակում էր մեղադրել հայկական սփյուռքին՝ նշված երկրների խորհրդարաններում լրբփստական գործունեություն ծավալելու համար:

Կարծում ենք դժվար չէ նկատել, որ Չայկական հարցը շարունակում էր քաղաքական շահարկումների առարկա հանդիսանալ ինչպես Թուրքիայի, այնպես էլ ժամանակի ազդեցիկ պետությունների կողմից: Այս մասին է վկայում հենց թեկուզ այն փաստը, որ հայցադիմումների հանձնաժողովը, չնայած ցեղասպանության ճանաչման ուղղությամբ նոր խորհրդարանական քննարկումներ կազմակերպելու իր ջանքերին, այնուամենայնիվ նույն տարվա սեպտեմբերին դադարեցրեց այն: Պատրվակը Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի (այսուհետ ԹՅՅՅ) աշխատանքների վերսկսման ու կողմերի հաշտեցման գործընթացին չխոչընդոտելն էր:

Խնդրո առարկա հիմնահարցի լուսաբանումն ամբողջական չի լինի, եթե մենք, թեկուզև ընդհանուր գծերով, չանդրադառնանք քննարկվող ժամանակահատվածում Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի ստեղծման հետ կապված Թուրքիայի դիրքորոշմանը: Այստեղ պետք է կարևորել այն հանգամանքը, որ Թուրքիան շահարկելով նման շփումների առկայությունը, փորձել է Չայոց ցեղասպանության հարցը քաղաքական հարթությունից տեղափոխել գիտական և հասարակական քննարկումների ոլորտ՝ հերթական անգամ նպատակ հետապնդելով շեղել համաշխարհային հանրության ուշադրությունը Չայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործընթացից: Հիշյալ հանգամանքին ուշադրություն էր դարձրել ՅՅ արտգործնախարար Վ. Օսկանյանը՝ գրելով, որ «հանձնաժողովի գոյությունը լծակ կարող է դառնալ Թուրքիայի ձեռքում Չայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը կասեցնելու համար»³:

Իսկ ինչ վերաբերում է ցեղասպանությունը չճանաչած և չդատապարտած պետություններին, մասնավորապես, Գերմանիային, ապա վերջիններս հետապնդելով որոշակի քաղաքական նպատակներ՝ ԹՅՅՅ-ի աշխատանքներին «չվնասելու» քողի տակ փորձում էին լուծել սեփական խնդիրները: Այսպես, թեև ԹՅՅՅ-ի դիմումի համաձայն Անցումային շրջանի արդարադատության միջազգային կենտրոնի իրավական գնահատականը (2003 թ. փետր-

¹ Տե՛ս Խաչատրյան Ա. Վ., *նշվ. հոդվ.*, էջ 198:

² *Նույն տեղում*:

³ Տե՛ս Անանյան Ա., *Չայ-թուրքական երկխոսության նոր փորձ (Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեության մասին)*, Ե., 2003, էջ 51:

վարի 10) հանգել էր եզրակացության, որ հայերի հետ կատարված եղելությունները համահունչ են ՄԱԿ-ի ցեղասպանության կոնվենցիայի բոլոր կետերին¹, այնուամենայնիվ 2001 թ. կեսից մինչև 2003 թ. աշուն ԹՀՀՀ-ի աշխատանքների ավարտին սպասելու պատճառաբանությամբ մի շարք երկրների խորհրդարաններ (Գերմանիան, Ավստրիան, Կանադան) իրենց օրակարգերից հանում են Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող բանաձևերը: Ավելին, նույն պատճառաբանությամբ 2001 թ. հոկտեմբերի 25-ին Եվրախորհրդարանը հրաժարվեց Հայոց ցեղասպանությունը Թուրքիայի կողմից ճանաչելը դիտել՝ որպես ԵՄ-ին անդամակցելու նախապայման²: Այսինքն հերթական անգամ պետք է կարևորել այն հանգամանքը, որ հայ ժողովրդի ազգային ողբերգությունն օգտագործվում է որպես Թուրքիային պատժելու կամ պատասխանելու գործիք: Եվ, որ իրականում «եվրոպական երկրներն էլ թուրքերին նախապայմաններ առաջադրելիս ելնում են ոչ թե այս կամ այն հարցի լուծման անհրաժեշտությունից, այլ Թուրքիային Եվրոպայից չօտարելու պայմանով ԵՄ-ին նրա անդամակցությանը խոչընդոտելու առաջադրանքից»: Ահա հենց դա էր «պատճառը, որ նախապայմանները տարբեր պատրվակներով հերթով փոխվում էին, իսկ խոչընդոտները մնում էին անփոփոխ»³: Հետևաբար, ԳԴՀ Բունդեսթագը ԹՀՀՀ-ի ստեղծման առնչությամբ չէ, որ օրակարգից հանել է Հայոց ցեղասպանության հիմնահարցի խորհրդարանական քննարկումը: Իրականում քննարկվող ժամանակահատվածում Հայոց ցեղասպանության հարցը Բունդեսթագում դեռևս խմորվում էր և պաշտոնապես օրակարգի հարց դառնալ չէր կարող: Գերմանիան պարզապես հարցի արծարծմամբ փորձում էր թողափել իր մեղսակցության ծանր բեռը, որի մասին իրազեկ էին ոչ միայն սույն փաստաթղթի նախաձեռնողներն ու հեղինակները, այլև միջազգային հանրությունն ու ցեղասպանությունը դատապարտած պետությունները:

Այնուամենայնիվ, չնայած գործադիր իշխանության դիրքորոշմանը, Գերմանիայում գործող նախաձեռնող խմբերի քաղաքական ջանքերը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման ուղղությամբ ունենում են որոշակի դրական արդյունքներ: Նրանց ջանքերով Բունդեսթագը վերստին անդրադառնում է Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրին և ընդունում համապատասխան որոշում: Անշուշտ, այս հարցում չպետք է մոռանալ նաև սփյուռքահայության դերակատարման մասին: Հայկական սփյուռքը մշտապես իր անգնահատելի ներդրումն է ունեցել Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործում: Դա բնորոշ էր նաև գերմանահայ համայնքին: Չնայած այն հանգամանքին, որ Գերմանիայում գոյություն ունեցող հայկական համայնքն իր չափերով և հնարավորություններով չէր կարող համեմատվել ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Մերձավոր Արևելքի երկրների հայկական համայնքների հետ, այնուամենայնիվ, այն իր մեծ ներդրումն ունեցավ Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման հարցը Բունդեսթագում օրակարգի հարց դարձնելու և վերջնական որոշում կայացնելու գործընթացում:

2005 թ. հունիսի 15-ին Գերմանիայի խորհրդարանը (Բունդեսթագը) միաձայն ընդունում է բանաձև, որով դատապարտվում էր «Օսմանյան կայսրությունում երիտթուրքերի կառավարության արարքները, որոնց հետևանքով բնաջնջվել է Անատոլիայի գրեթե ամբողջ հայությունը»⁴:

¹ "The Applicability of the United Nations Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide to Events Which Occurred During the Early Twentieth Century", p. 17, <https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Turkey-Armenian-Reconciliation-2002-English.pdf>

² Տե՛ս Նոյյան Տապան, [http://www.nt.am/am/news/105503/\(մուտք`25.10.2001թ.\)](http://www.nt.am/am/news/105503/(մուտք`25.10.2001թ.))

³ «Ազգ», Եր., 2001, 27 հոկտեմբերի:

⁴ ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 41, թափ. 73, 74, ֆ. հ. 172: Տե՛ս նաև "Deutscher Bundestag", 15. Wahlperiode, Antrag der Fraktionen SPD, CDU/CSU, BÜNDNIS 90/DIE GRÜNEN und FDP, Erinnerung und Gedenken an die Vertreibungen und Massaker an den Armeniern 1915- Deutschland muss zur Versöhnung zwischen Türken und Armeniern beitragen, Drucksache 15/5689, 15. 06.2005, <http://dipbt.bundestag.de/doc/btd/15/056/1505689.pdf>.

ԳԴՅ Բունդեսթագի Յայոց ցեղասպանության բանաձևի ընդունումը ունեցավ քաղաքական և պատմական կարևոր նշանակություն: Բանաձևի ընդունումը առաջընթաց քայլ էր Յայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացում: Այն դուրս եկավ հայգերմանական և թուրք-գերմանական միջպետական հարաբերությունների շրջանակներից ու ստացավ համաեվրոպական հնչեղություն: Չնայած այս հանգամանքին, պետք է նշել, որ բանաձևում մեզ համար առկա էին թե՛ դրական և թե՛ բացասական կողմեր: Բացասական կողմերից մեկն այն էր, որ նախ այստեղ չէր օգտագործվում «ցեղասպանություն» եզրույթը, մինչդեռ, ինչպես վկայում են փաստերը, բանաձևի նախնական քննարկումների ընթացքում Բունդեսթագի պատգամավորների մի զգալի մասն իրենց ելույթներում օգտագործել էին հենց «ցեղասպանություն» եզրույթը¹: Ուստի ամենևին էլ պատահական չէր, որ Ամենայն Յայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն ՅՅ ղեկավարության միջոցով դիմել էր Բունդեսթագի խմբակցություններին՝ խնդրելով բանաձևում օգտագործել «ցեղասպանություն» եզրույթը²:

Մյուս բացասական կողմն այն էր, որ Գերմանիայի Բունդեսթագը հայցում էր դաշնային կառավարությանը «պաշտպանել թուրք, հայ և միջազգային փորձագետներ ներառող պատմաբանների հանձնաժողովի ստեղծումը»: Դժվար չէ կռահել, որ Բունդեսթագի այս բանաձևը փաստորեն պաշտպանում էր Էրդողանի հայտնի կոչը ՅՅ ղեկավարությանը³: Նման առաջարկն ընդունելը կնշանակեր կասկածի տակ դնել տարբեր երկրների օրենսդիր մարմինների և միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված բանաձևերը, որոնցում հստակ ընդունվում և դատապարտվում էր Յայոց ցեղասպանության փաստը:

Եվ, վերջապես, առնվազն տարակուսանք էր հարուցում «Անատոլիա» աշխարհագրական տերմինի առկայությունը բանաձևում: Տերմին, որը 1923 թ. սկսած թուրքական գրականության մեջ օգտագործվում է ողջ Ասիական Թուրքիան (ներառյալ Արևմտյան Յայաստանը) կոչելու համար, որով և խեղաթյուրվել է այդ տերմինի բուն աշխարհագրական բովանդակությունը:

Բանաձևն ուներ նաև դրական կողմեր, որոնցից ցանկանում ենք առանձնացնել հետևյալը.

1. այն «դատապարտում է Գերմանիայի Ռեյխի անփառունակ դերը, որը, տեղեկացված լինելով հայերի կազմակերպված տեղահանությունների և բնաջնջման մասին, ոչ մի փորձ չձեռնարկեց այդ վայրագությունները դադարեցնելու համար»,

2. բանաձևում ափսոսանք էր հայտնվում, որ Թուրքիայում Օսմանյան կայսրության անցյալի այդ իրադարձությունների վերաբերյալ մինչ այսօր հնարավոր չէ ամբողջական քննարկում իրականացնել, և, որ **գիտնականներն ու գրողները, ովքեր ցանկանում են գործ ունենալ Թուրքիայի պատմության այս կողմերի հետ, ենթարկվում են հետապնդումների և զրպարտանքի** (ընդգծումը մերն է-Մ.Ն., Յ.Մ.): Այստեղ, կարծում ենք, սխալված չենք լինի, եթե նշենք, որ բանաձևի այս կետը յուրատեսակ հորդոր էր թուրքական իշխանություններին՝ դադարեցնել Թուրքիայի պատմության նշված շրջանով զբաղվող մասնագետների հետապնդումները,

3. բանաձևում նշվում էր նաև «Թուրքիայի՝ Յայաստանի հետ սահմանների բացումը կարող էր օգտակար լինել Յայաստանի մեկուսացվածությունը նվազեցնելուն և նպաստեր դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը»՝ դրանով իսկ «նպաստելով Կովկասի տարածաշրջանի կայունացմանը»⁴:

Բունդեսթագի կողմից նշված օրինագծի ընդունումը, անկասկած, Թուրքիայի կողմից որդեգրած Յայոց ցեղասպանության ժխտման դեմ պայքարի արդյունավետ միջոց էր: Այլ

¹ Տե՛ս «Deutsch-Armenische Gesellschaft, 100 Jahre Deutsch-Armenische Gesellschaft: Erinnern. Gedenken. Gestalten», Hannover, 2014, s. 204.

² Տե՛ս ՅՅ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, գործ 9-11, էջ 90:

³ Տե՛ս Najaryan M., Armenian-Turkish relations in 2005-2008, «Բանքեր հայագիտության», Յայագիտական միջազգային հանդես, ԳԱԱ, «Գիտություն» հրատ., թիվ 2 (17), Ե., 2018, էջ 50-59:

⁴ ՅՅԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 41, թապ. 73, 74, ֆ. հ. 172:

հարց է, որ ինչպես Գերմանիան, այնպես էլ ցեղասպանությունը ճանաչած և դատապարտած երկրների ճշող մեծամասնությունը ժամանակի աշխարհաբաղադրական զարգացումների համատեքստում առաջին հերթին առաջնորդվում էին սեփական շահերով, և վերջիններիս բարձրագույն օրենսդիր մարմինների կողմից ընդունված բանաձևերի ճշող մեծամասնությունը, ինչպես և նախկինում, օժտված չէին օրենքի ուժով, գերազանցապես դեկլարատիվ բնույթ էին կրում և չէին կարող դիտարկվել՝ որպես այդ երկրների գործադիր մարմինների կողմից գործունեության պարտադիր պայման¹:

Ուստի Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործում պետք է կարևորել հենց տարբեր երկրների գործադիր իշխանությունների հետ տարվելիք աշխատանքները և քայլեր ձեռնարկել միջազգային աստիճաններում դրանք օրենքների վերափոխելու ուղղությամբ:

Բունդեսթագի կողմից ընդունված բանաձևը միջազգային տարբեր աստիճաններում, խորհրդարաններում Հայոց ցեղասպանության ճանաչմանը վերաբերող քննարկումների և դրանց հաջորդած բանաձևերի ու օրենքների ընդունման նման արժանացավ հակաքայլերի թուրքիայի կողմից:

Այսպես, 2005 թ. հունիսի 17-ին Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը Հայոց ցեղասպանությունը ճանաչած բանաձևի վերաբերյալ հանդես է գալիս հետևյալ հայտարարությամբ. «Այն պետությունը, որին մենք միշտ բարեկամ ու դաշնակից ենք համարել, խորապես վիրավորում է թուրք ժողովրդին: Մենք ցանկանում ենք ընդգծել, որ այդ քայլը բացասական հետևանքներ կունենա մեր հարաբերությունների վրա»²: Իսկ Թուրքիայի վարչապետ Ռ.Թ. Էրդողանը վրդովված փաստից, չխորշեց վիրավորել իր գերմանացի գործընկեր՝ կանցլեր Գ. Շրոյդերին՝ անվանելով վերջինիս «անողնաշար», չնայած կանցլերի խիստ բարեկամական վերաբերմունքին թե՛ Թուրքիայի, թե՛ այդ երկրի վարչապետի նկատմամբ³:

Բայց և այդպես, կարծում ենք՝ միանգամայն իրավացի է Ա. Մելքոնյանը, ով, մեկնաբանելով նման իրադարձությունները, նշում է, որ դա «հերթական թուրքական հիստորիան էր», քանի որ Թուրքիան նման կերպ էր վարվում Հայոց ցեղասպանությունը դատապարտած և ցեղասպանությունը քրեականացնող օրինագծեր ընդունած բոլոր երկրների հետ⁴: Ինչ վերաբերում է Գերմանիայի խորհրդարանի կողմից ընդունած բանաձևին Թուրքիայի արձագանքներին (դեսպանի հետկանչը, Գերմանիայի հետ առևտրատնտեսական հարաբերությունները սահմանափակելը և այլն), ապա դրանք ընդամենը հուսահատ քայլեր էին, քանզի, ինչպես իրավացիորեն նշում է Ռ. Սաֆրաստյանը, «Թուրքիան գրեթե միջոց չունի Գերմանիայի վրա ազդելու, հակառակը, Թուրքիան է տնտեսական առումով կախվածության մեջ գտնվում Գերմանիայից»: Ըստ հեղինակի՝ Գերմանիայի հասցեին «Թուրքիայի սպառնալիքները լուրջ չեն»⁵: Ավելին, ցանկանում ենք շեշտել նաև այն փաստը, որ իր հերթին Գերմանիայի կառավարության խոսնակ Թ. Շտեգը, անդրադառնալով Թուրքիայի իշխանությունների հակազդեցությանը, այդ երկրի վարչապետ Էրդողանի կողմից բանաձևին տրված «սխալ և տգեղ» բնորոշումը որակել է որպես բացթողում, քանի որ Բունդեսթագի որոշումը հավասարակշռված բնույթ է կրում⁶:

¹ Տե՛ս Վարդանյան Վ., Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման իրավական հիմնախնդիրները, Ե., 2017, էջ 19-20:

² «Հայկական ժամանակ», Ե., 2005, 18 հունիսի:

³ Տե՛ս Խաչատուրյան Ա. Վ., նշվ. հոդվ., էջ 202:

⁴ Մելքոնյան Ա., Ցեղասպանություն և հայրենասիրություն. ճանաչումից՝ հատուցում, (հոդվածներ և հարցազրույցներ), Ե., 2015, էջ 390:

⁵ Սաֆրաստյան Ռ., Թուրքիան սպառնում է, Գերմանիան մասնկրում, <http://www.armradio.am/hy/2016/06/07/թուրքիան-սպառնում-է-գերմանիան-մասնկրում-մուտք-07.06.2016-թ.>

⁶ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», Ե., 2005, 18 հունիսի:

Ուստի նշված ճանապարհով Գերմանիայում Հայոց ցեղասպանությունը ժխտելու ու միջազգային ճանաչման գործընթացը կասեցնելու թուրքական իշխանությունների հետևողական ջանքերն, այնուամենայնիվ, ի գորու չեղան կասեցնելու Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հետագա ընթացքը: Արագ փոփոխվող աշխարհում տեղի ունեցող վերջին զարգացումները, միջազգային աշխարհաքաղաքական գործընթացները, նոր մտածողությունն ու մոտեցումները և, հատկապես, ժամանակակից Թուրքիայի կեցվածքը, որը հեռու է ժողովրդավարական սկզբունքներից, նպաստեցին, որ Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացն ավելի հետևողական ու վճռական քայլերի արդյունքում օրակարգի հարց դառնա և վերջնական ընդունվի Գերմանիայի Բունդեսթագի կողմից: Ավելին, Գերմանիայի կանցլեր Ա. Մերկելը՝ չթաքցնելով Եվրոպայի դժգոհությունը Թուրքիայից, 2014 թ. փետրվարի 7-ին Թուրքիայի վարչապետ Ռ.Թ. Էրդողանի հետ հանդիպման ժամանակ հանդես եկավ այն տեսակետով, որ «Թուրքիան պետք է առերեսվի սեփական պատմության հետ Հայոց ցեղասպանության հարցում, ինչպես նաև բացի Հայաստանի հետ սահմանը»¹:

Նկատենք, որ եթե Ֆրանսիայի նախագահները (Ն.Սարկոզի, Ֆ. Օլանդ) խոսում էին ոչ միայն ցեղասպանության ճանաչման, այլև դրա ժխտումը քրեականացնող օրենքի ընդունման մասին², ապա Գերմանիայի կանցլերը հանդես էր գալիս Հայոց ցեղասպանությունը ճանաչելու և Հայաստանի հետ սահմանը բացելու Թուրքիային ուղղված կոչով:

Ավելին, Հայոց ցեղասպանության 100-ամյակի նախօրեին՝ 2015 թ. ապրիլի 23-ին, Գերմանիայի նախագահ Յոախիմ Գաուկը Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված՝ Բեռլինի մայր տաճարում անցկացված միջոցառման ժամանակ ոչ միայն հարգանքի տուրք է մատուցում անմեղ զոհերի հիշատակին, այլև կրկնելով Հռոմի պապի ձևակերպումը՝ Հայոց ցեղասպանությունը անվանում է «20-րդ դարի առաջին ցեղասպանություն» և խոսում այդ ոճրագործության մեջ իր երկրի ունեցած մեղսակցության բաժնի մասին³: Գերմանիայի նախագահի նշված ելույթին արդեն 2015 թ. ապրիլի 24-ին հաջորդում է Գերմանիայի Բունդեսթագի նախագահ պրոֆ. Նորբերտ Լամերտինի այն հայտարարությունը, ըստ որի «անցյալի հետ առերեսումը մեզ համար (նկատի ունի Գերմանիան-Մ.Ն., Հ.Մ.) կարող է ցավոտ լինել, սակայն միևնույն ժամանակ կարող է լինել ազնիվ և ինքնաքննադատական մոտեցում սեփական անցյալի նկատմամբ»: Հանգամանք, որն, ըստ Լամերտինի, «կարևոր է այլ պետությունների հետ հարաբերությունների կառուցման տեսանկյունից, որի համար պետք է խիզախություն՝ փոխըմբռնման և հաշտեցման հասնելու համար»⁴:

Մեր կողմից ցանկանում ենք ավելացնել միայն, որ Գերմանիայի նախագահ Յո. Գաուկի և Բունդեսթագի նախագահ Ն. Լամերտինի հայտարարությունները խիստ կարևոր են ոչ միայն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման տեսանկյունից, այլև արժեքավոր ներդրում են ցեղասպանության և մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելման միջազգային հանրության միասնական ջանքերում:

Ուստի ամենևին էլ պատահական չէ, որ արդեն 2016 թ. հունիսի 2-ին Գերմանիայի Բունդեսթագի կողմից ընդունված «1915 թվականի հայերի և մյուս քրիստոնյա փոքրամասնությունների ցեղասպանության հիշատակի և ոգեկոչման մասին» բանաձևում Գերմանիայի խորհրդարանը դատապարտում էր «...օսմանյան կառավարության կողմից հայերին գրեթե ամբողջությամբ ոչնչացնելու գործողությունները և **ընդունում է իր պատմական**

¹ Իսկանդարյան Ա., Մերկելի՝ Հայոց ցեղասպանության հարցի վերաբերյալ հայտարարությունն արտացոլում է Եվրոպայի դժգոհությունը Թուրքիայից, <http://www.yerkramas.org/am/article/80579/> (մուտք՝ 11.02.2014 թ.)

² Տե՛ս Ходжаян К. Г., *Вопрос криминализации отрицания геноцида армян во француско-турецких отношениях*, «Լրագրեր հասարակական գիտությունների», № 1, Ե., 2015, էջ 70-76:

³ Տե՛ս «Հիշում են և պահանջում, Հայոց ցեղասպանության 100-րդ տարեից 1915-2015», «Տեղեկագիրք» թողարկում 3, Ե., 2015, էջ 41:

⁴ «Գերմանիան ճանաչեց Հայոց ցեղասպանությունը», <https://www.civilnet.am/news/2016/06/02/bundestag-genocide-resolution-discussion/294283> (մուտք՝ 02.06.2016 թ.)

պատասխանատվությունը ողբերգության համար (ընդգծումը մերն է-Մ.Ն., Յ.Մ.)¹: Ինչպես հստակ երևում է բանաձևից, Գերմանիան, ի տարբերություն 2005 թ. հունիսի 15-ի բանաձևի, փաստորեն, ընդունում է իր մեղսակցությունը Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության մասով, քանի որ հանդիսացել էր Թուրքիայի դաշնակիցը:

Անդրադառնալով Գերմանիայի Բունդեսթագի կողմից ընդունված բանաձևի նշանակությանը՝ Ռ. Սաֆրաստյանը միանգամայն իրավացիորեն այն կարծիքն է հայտնում, որ «Բունդեսթագի որոշումը շատ կարևոր նշանակություն ունի, քանզի Եվրոպայում ձևավորվում էր մի նոր մթնոլորտ Չայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման առումով»: Որպես ասվածի ապացույց՝ հեղինակը բերում է Չեխիայի նախագահի այն հայտարարությունը, որով նա խոստանում էր ամեն ինչ անել, «որպեսզի նույնպես ճանաչի և դատապարտի Չայոց ցեղասպանությունը»²:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ Գերմանիայի կողմից ընդունված Չայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող բանաձևը նոր փուլ բացեց հայկական հարցի, հայ դատի իրավական լուծման ճանապարհին: Այսինքն՝ մենք կարող ենք համարել, որ Չայոց ցեղասպանության իրողությունը, որպես պատմաբաղադրական երևույթ և հայերի հանդեպ իրականացված մեծագույն ոճիր, այլևս քննարկման առարկա չէ: Զբացառելով պատմական այս փուլում թուրք-գերմանական հարաբերություններում առկա լարվածության որոշակի ազդեցությունը Գերմանիայի հայանպաստ դիրքորոշման վրա, այնուամենայնիվ, կարծում ենք, որ Գերմանիայում Չայոց ցեղասպանության ճանաչման բանաձևի ընդունումը հայկական շահերը ներկայացնող խմբերի, սփյուռքահայության, ինչպես նաև հայկական դիվանագիտության երկարատև ու եռանդուն աշխատանքի արդյունք է:

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ բանաձևի ընդունումն իր մեջ չի պարունակում որևէ հակաթուրքական ազդակ: Այսինքն՝ վերջապես ձևավորվեց այն ընկալումը, որ հայ ժողովրդի պայքարը ոչ թե պայքար է ընդդեմ, այլ պայքար է հանուն: Այն պայքար է հանուն պատմական արդարության վերականգնման, նմանօրինակ հանցագործությունների կրկնության բացառման: Գերմանիայի Բունդեսթագը, ընդունելով և դատապարտելով Օսմանյան Թուրքիայում տեղի ունեցած Չայոց ցեղասպանությունը, միաժամանակ փաստեց նաև իր պատասխանատվությունն ու մեղսակցությունը տեղի ունեցածի համար: Սակայն այս ամենը ոչ միայն չհեղինակագրկեց Գերմանիային միջազգային ասպարեզում, այլև զգալիորեն ամրապնդեց նրա դիրքերը՝ էլ ավելի բարձրացնելով հեղինակությունը: Ընդունելով սեփական սխալները՝ վերջինս վերահաստատեց իր հավատարմությունը մարդու իրավունքների պաշտպանությանը և համամարդկային արժեքներին: Բանաձևը կարևոր ուղերձ է նաև Թուրքիային սեփական պատմության հետ առերեսվելու և Չայոց ցեղասպանության պատմական իսկությունը ճանաչելու համար:

Мери Наджарян, Рипсима Мурадьян, ПОЗИЦИЯ ГЕРМАНИИ В ВОПРОСЕ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН (2001-2016 ГГ.). В статье рассматриваются принятые в разное время Бундестагом Германии резолюции, осуждающие Геноцид армян, а также вопросы, касающиеся политики, права и морали. Подобный подход к признанию геноцида в свете правовой ответственности и исторической памяти подразумевает осуждение и преодоление последствий этого чудовищного преступления.

¹ ՅՅԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 41, թպ. 109, ֆ. հ. 264:

² Սաֆրաստյան Ռ., Թուրքիան սպառնում է, Գերմանիան մանևրում,

[http://www.armradio.am/hy/2016/06/07/թուրքիան-սպառնում-է-գերմանիան-մանևր/_\(մուտք՝ 07.06.2016 թ.\)](http://www.armradio.am/hy/2016/06/07/թուրքիան-սպառնում-է-գերմանիան-մանևր/_(մուտք՝ 07.06.2016 թ.))

Конечно, дебаты по вопросу о признании Геноцида армян, принятые резолюции, а в дальнейшем и законы были крайне болезненно восприняты в Турции и Германии, являющейся ее союзницей, и встретили противодействие. По этой причине в статье значительное место отводится реакции турецкой и немецкой сторон и предпринимаемым ими действиям. Но, как отмечается в статье, дипломатическими мерами невозможно было остановить процесс признания Геноцида армян.

В статье обосновывается негативное влияние геополитических интересов крупных держав на восстановление исторической справедливости, что наблюдалось как в прошлом, так и в настоящее время. Германия, как и другие государства, руководствовалась собственными интересами, однако нашла в себе силы признать факт соучастия в преступлении и осудить собственное прошлое. Это не только не дискредитировало ее в глазах международного сообщества, но существенно укрепило ее позиции, повысило авторитет, еще раз подчеркнуло ее приверженность общечеловеческим ценностям и защите прав человека. Этот шаг не только крайне важен с точки зрения международного признания и осуждения Геноцида армян, но также является ценным вкладом в совместные усилия международного сообщества по предупреждению геноцида и преступлений против человечности.

Ключевые слова: Геноцид армян, Республика Армении, Германия, диаспора, новый подход, решение, Бундестаг, выступление, признание, Турция.

Meri Najaryan, Hripsime Muradyan, GERMANY'S STAND ON THE ISSUE OF INTERNATIONAL RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE (2001-2016). This article examines the resolutions condemning the Armenian Genocide, adopted by the German Bundestag at different periods. It raises issues of political, legal and moral nature, which include some observations on the recognition, legal liability and historical memory of the Genocide. Moreover, those issues are viewed as means of overcoming the consequences of the Genocide and as a way of condemning international crime. It is clear that the discussions on the recognition of the Armenian Genocide and the adoption of the laws and resolutions that followed them could not be accepted immediately, and that they should have been painfully received by Turkey and its ally Germany, facing some countermeasures. Therefore, the article greatly covers the reactions, counteractions and related actions of the Turkish and German parties during every discussion of the resolution. It is underlined in the article, it was impossible to suspend the process of the recognition of the Armenian Genocide through diplomatic means. And although the article clearly substantiates that the geopolitical interests of the great powers have always had a negative impact on the victory of historical justice, it is highlighted that as much as Germany was guided by its own interests, like other countries, by acknowledging its guilt and condemning its ancestors' crimes it not only did not discredit itself in the international arena, but also significantly strengthened its reputation and position, once again reaffirming its commitment to human rights and universal values. This action was highly essential not only from the perspective of the international recognition and condemnation of the Armenian Genocide, but was also a valuable contribution to the joint efforts of the international community to prevent genocide and crimes against humanity.

Key words: Armenian Genocide, Republic of Armenia, Germany, diaspora, new manifestation, resolution, Bundestag, speech, recognition, Turkey.